ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

1915-1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում մեծ ներդրում ունի ՀՀ ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը (1910-1999)։ Նա իր բազմաթիվ ուսումնասիրություններում անդրադառնալով ԺԹ. դարի 90-ական թթ. սուլթանական վարչակարգի կողմից իրականացված հայկական ջարդերին, գտնում է, որ դրանք շարունակեցին երիտթուրքերը՝ գերազանցելով իրենց նախորդներին։ Իշխանությունը գրավելուց հետո երիտթուրքերը, մոռանալով ազատության, արդարության, հավասարության եւ եղբայրության մասին իրենց տված խոստումները, 1909 թ. կազմակերպեցին Կիլիկիայի հայության կոտորածը։ Չխորանալով եզակի դաժանությամբ կազմակերպված այդ արյունալի ջարդերի մանրամասների մեջ՝ նշենք, որ երիտթուրքերը, փաստորեն, շարունակեցին «կարմիր սուլթանի» որդեգրած արյունոտ քաղաքականությունը՝ դառնալով նրա արժանի ժառանգորդը[1]։ Արեւմտահայությունը կրկին ենթարկվեց բնաջնջման, ջարդերի ու տեղահանության։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ինչպես գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը, Օսմանյան կայսրության կառավարողներն իրենց մարդատյաց գաղափարների ամբողջ զինանոցը՝ իսլամիզմն ու պանիսլամիզմը, թյուրքիզմն ու պանթյուրքիզմը, ամենից առաջ ուղղեցին հայ ժողովրդի դեմ[2]։

[1] Այդ մասին տես **Ռ. Գասպարյան**, Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. - 1921 թ.), Երեւան, 2005։ **Հ. Սիմոնյան**, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երեւան, 2009։

[2] Տես **Հ. Սիմոնյան**, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը եւ քաղաքականությունը, Երեւան, 1986, էջ 286-287։

Նշենք, որ Հայոց ցեղասպանության ժամանակագրական սահմանների վերաբերյալ կան տարակարծություններ: Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը, հանդես բերելով համակողմանի մոտեցում եւ ԺԹ. դարի 90-ական թթ. հայկական ջարդերը համարելով Հայոց ցեղասպանության սկիզբ, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1915-1916 թթ. մարդկային կորուստներն ահռելի էին, այն բնութագրել է որպես Մեծ եղեռն: Ցեղասպանության քաղաքականություն կիրառվել է նաեւ 1920-1922 թթ. Մուստաֆա Քեմալի կողմից: Պատմաբանն իրավացիորեն նկատում է, որ այդ՝ ոչնչի առջեւ կանգ չառնող ազգայնականները նպատակ ունեին «թուրքացնել» կայսրությունը՝ բոլոր ոչ թուրք ժողովուրդներին բռնությամբ ձուլելու եւ ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով: Եւ դա ամենից առաջ կիրառեցին արեւմտահայության նկատմամբ: Նա մատնանշում է Թուրքիայի այն ժամանակվա մի շարք պաշտոնյաների հուշագրություններում, ինչպես նաեւ պաշտոնական զեկուցագրերում պահպանված՝ երիտթուրքերի պարագլուխների գաղտնի խորհրդակցության ժամանակ կուսակցության կենտկոմի քարտուղար դոկտոր Նազրիմի հետեւյալ արտահայտությունը. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում եւ մոռացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի հարմար իրադրություն էլ չի լինի... անհրաժեշտ է ոչնչացնել մինչեւ վերջին մարդը... Ես ուզում եմ, որ այս հողի վրա թուրքը եւ միայն թուրքը ապրի ու լիիշխան տեր լինի: Թող չքվեն բոլոր ոչ թուրք տարրերը՝ ինչ ազգության ու կրոնի էլ պատկանելիս լինեն»[3]: Նման ոգով ելույթ են ունեցել նաեւ Թալեաթը եւ հայ ժողովրդի մյուս դահիճները:

Մ. Ներսիսյանը գրում է, որ երիտթուրքերը որոշ առումով եղել են գերմանացի ֆաշիստների նախորդները: Որպես հիմնավորում նա մատնանշում է, թե ինչպես էին 1915-1916 թթ. թուրք բժիշկները, համապատասխան ղեկավարության գիտությամբ ու համաձայնությամբ, Երզնկա քաղաքի հիվանդանոցներում ու լաբորատորիաներում հայերին օգտագործում որպես փորձակենդանիների[4]:

---

[3] Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 177, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, Երեւան, 1998, էջ 160-161. տես նաեւ նույնի՝ «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր», Երեւան, 2005, էջ 67:

[4] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 34, նաեւ գ. 255, թ. 43, տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում». Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ. Ներսիսյանի խմբագրությամբ: Կազմողներ՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երեւան, 1991, Նախաբան, էջ XIV (այսուհետ՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»):

Պատահական չէ, որ Հիտլերը երբեմն վկայակոչում էր երիտթուրքական դահիճների «փորձը»: Այսպես, 1939 թ. օգոստոսի 22-ին՝ Լեհաստանի վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման նախօրյակին, Օբերզալցբուրգ քաղաքում հրավիրված մի խորհրդակցության ժամանակ նա իր գեներալներին ոգեւորելու համար ասել է. «Ոչ մի ուշադրություն հասարակական կարծիքին... Ո՞վ է այսօր հիշում հայկական կոտորածները»[5]:

Մ. Ներսիսյանը, հենվելով ժամանակակիցների հուշերի եւ արխիվային նյութերի վրա, շեշտում է, որ Հայոց ցեղասպանությունն իրականացվել է հրեշավոր դաժանությամբ: Մ. Ներսիսյանը վկայակոչում է ռուս անվանի արեւելագետ Վ. Գորդլեւսկուն, որը եղել էր ռուսական զորքերի կողմից գրավված Արեւմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում ու գյուղերում: Նա Բիթլիսի սարսափազդու իրադարձությունների մասին գրել է. «Դա սպանդ էր, ժողովրդի աննախադեպ ջարդ: Մարդիկ ասես կորցրել էին խիղճը: Բայց ամաչել էր Եփրատը եւ լաց եղել արյուն-արցունքով: Մուշի մոտակա կամուրջն իր վրա տակավին պահպանում է շերտերը, այն հետքերը, երբ գետն արյունից վարարել էր: Այդպես զոհվեցին մեկ միլիոնից ավելի հայեր»[6]:

Մ. Ներսիսյանը քննադատում է պատմության կեղծարարներին, ովքեր, հեռանալով ճշմարտությունից, փորձում են ապացուցել, որ երիտթուրքերը չեն ունեցել ցեղասպանության կանխամտածված ծրագիր, որ ռազմական իրավիճակից ելնելով՝ արեւմտահայերին տեղափոխել են երկրի խորքերը, եւ որ պատերազմի տարիներին զոհվել են թե՛ հայերը եւ թե՛ թուրքերը: Նա ավելացնում է, որ հայկական ջարդերի մասին աղաղակող փաստերն են Ֆ. Նանսենին բերել այն եզրակացության, որ հայերի նկատմամբ երիտթուրքերի գազանությունները «իրենց չափերով ու ահավոր դաժանությամբ գերազանցում են այն բոլորը, ինչ հայտնի է պատմությանը... Թուրքական արյունոտ պատմությանը ավելացավ այնպիսի մի ահավոր գլուխ, որը ստվերում է թողնում նախընթաց բոլորը»[7]:

---

[5] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 18-19, 35, նաեւ գ. 253, թ. 34, նաեւ գ. 254, թ. 2, 10, 20, 77, նաեւ գ. 256, թ. 96, 103, 132, նաեւ գ. 621, թ. 32. տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Նախաբան, էջ XV:

[6] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 35, նաեւ գ. 253, թ. 29, 112, նաեւ գ. 254, թ. 128, նաեւ գ. 255, թ. 35. տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 602: **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 101, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 104-105:

[7] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 35, նաեւ գ. 253, թ. 30, նաեւ գ. 254, թ. 86, 110, 129, նաեւ գ. 255, թ. 18, 24, 35. տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 709-710, **Ֆ. Նանսեն**, Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքը, Երեւան, 1993, էջ 170, **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 101:

Մ. Ներսիսյանը հիշեցնում է 1913-1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի՝ ցասումով եւ սրտի խոր կսկիծով գրած հայտնի խոսքերը. «Ես վստահ եմ, որ մարդկության համայն պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն էր: Այն մեծ կոտորածներն ու հալածանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, համարյա աննշան բան են թվում հայ ազգի 1915 թ. կրած տառապանքների համեմատությամբ»[8]:

Մ. Ներսիսյանը «Արեւմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը» հոդվածում[9] նշում է, որ դեռեւս 1912-1913 թթ. երիտթուրքերը գործնական քայլեր են կատարել հայերի համընդհանուր կոտորածներ կազմակերպելու ուղղությամբ: Նա վկայակոչում է պետական արխիվներում եւ ժամանակի պարբերական մամուլում եղած նյութերը: Այսպես, Կ. Պոլսի ռուսական դեսպանն իր՝ արտգործնախարարությանն ուղղած հաղորդագրության մեջ դեռեւս 1911 թ. հոկտեմբերի 8-ին նշում է, որ «Թուրքիայի հայ բնակչության նկատմամբ խիստ ուժեղացել են հալածանքները, որ հայերի սպանություններն ու թալանը, բռնի իսլամացումը եւ այդ կարգի այլ գործողություններ դարձել են ավելի հաճախակի... Թուրքական կառավարության հրամանով հայերից գրավում են նրանց բոլոր տեսակի զենքերը»[10]:

1913 թ. դեկտեմբերի 7-ին Էրզրումի ռուսական հյուպատոս Ադամովը Կ. Պոլսի իր դեսպանին հեռագրում էր, որ «քաղաքում մահմեդականներին արհեստականորեն գրգռում են հայերի դեմ: Այդ արվում է իթթիհաթականների (երիտթուրքերի) տներում տեղի ունեցող գաղտնի ժողովներում»[11]: Նույն Ադամովը 1913 թ. դեկտեմբերի 29-ի հեռագրում արդեն հաղորդում էր. «Այստեղ (Էրզրումում) տեղի ունեցող գաղտնի ժողովներում սկսել են

[8] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 30, նաեւ գ. 254, թ. 86, 110, 128, նաեւ գ. 255, թ. 18, 23-24. տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 667-668: **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 100, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 71: **Հ. Մորգենթաու**, Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եւ հայկական եղեռնի գաղտնիքները, Երեւան, 1990, էջ 267:

[9] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 274, թ. 9, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Արեւմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը, «Պատմաբանասիրական հանդես», 1995, թ. 2, էջ 11-20, նույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 125-138, տես նաեւ նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 7-23:

[10] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 254, թ. 151, տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 276, **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 126-127, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 9:

[11] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 621, թ. 13. տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 323, **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 127, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 9-10:

խոսել հայկական կոտորածների մասին: Մոլլաների հրամանով մահմեդականները սկսել են գլուխները ծածկել սպիտակ չալմաներով: Ըստ տարածված լուրերի՝ ամեն ինչ պատրաստ է ջարդերի համար, միայն սպասում են մայրաքաղաքի (Կ. Պոլսի) ազդանշանին»[12]:

Ճիշտ է նկատում Մ. Ներսիսյանը, որ այդ բոլորը կատարվում էր 1911-1913 թթ., այսինքն՝ մի ժամանակ, երբ խոսք չկար հայերի «ապստամբությունների» մասին: Ինչպե՞ս կարելի է անտեսել մղձավանջի վերածված իրականությունը: Տեղին է պատմաբանի զայրույթը. «Բացահայտ կեղծիք ու դատարկ շաղակրատանք է թուրք հեղինակների, ինչպես նաեւ նրանց հետեւող այլազգի առանձին «պատմաբանների» այն պնդումը, որ եթե 1914 թ. չկազմակերպվեին հայ կամավորական խմբեր, ու տեղի չունենար Վանի 1915 թ. ապրիլյան հերոսական ինքնապաշտպանությունը, ապա արեւմտահայությունը զերծ կմնար ցեղասպանությունից: Ուրեմն, ըստ պատմության կեղծարարների, ստացվում է, որ հայկական կոտորածների պատճառը հենց իրենք՝ հայերն էին: Ինչպիսի ցինիզմ ու ստախոսություն...»[13]:

Իրոք, ինչպե՞ս կարելի է հեռանալ պատմական ճշմարտությունից, կորցնել իրատեսության զգացումը, եւ նախապես մշակված ցեղասպանության ծրագիրը, որը վերածվել էր պետական քաղաքականության, թողնել մի կողմ եւ մեղքը բարդել կամավորական ջոկատների եւ Վանի 1915 թ. ինքնապաշտպանական կռիվների վրա: Այդ առումով ուշադրության է արժանի Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովի՝ 1915 թ. մայիսի 1-ի Լոնդոնի ռուսական դեսպանին ուղարկած հեռագիրը. «Կասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունն է հարուցել կոտորածը եւ ոչ թե հակառակը, որովհետեւ հայերի համար իմաստ չուներ մինչեւ մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»[14]: Մինչդեռ թուրքերն իրենց հանցագործություններն արդարացնելու համար մեղադրել են հայերին:

Շարունակելով իր միտքը եւ վկայակոչելով բազմաթիվ փաստեր՝ Մ. Ներսիսյանը նկատում է, որ երիտթուրքերի որդեգրած ջարդարար քաղաքականությունն ընդունել են ոչ միայն մի շարք թուրք գործիչներ, այլեւ

---

[12] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 621, թ. 14, տե՛ս նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 324, **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 127, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 10:

[13] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 119, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 103:

[14] Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 340:

նրանց համախոհ գերմանացի պաշտոնական անձինք: Նա վկայակոչում է 1916 թ. Հալեպում գործող թուրքական կառավարական կոմիտեի պաշտոնյաներից մեկի՝ Նայիմ բեյի համարձակորեն ասած խոսքերը. «Ես կարծում եմ, որ հայերի աքսորն ու կոտորածը... իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչեւ այժմ գրված պատմությունների մեջ: Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ հայացք նետես, որ խոր կիրճն էլ որ նայես՝ ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»[15]:

Մ. Ներսիսյանը դիմում է կասկած չհարուցող բազում վկայությունների: Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչ, դոկտոր Մ. Նիպագեն, 1915 թ. սեպտեմբերին Բեյրութից Հալեպ վերադառնալով, հայերի կոտորածների մասին գրել է. «Փլվող քարվանսարաներում ես հայտնաբերեցի քայքայված դիակների կույտեր եւ դրանց միջեւ՝ դեռեւս կենդանի էակներ, որոնք հոգեվարքի մեջ էին»[16]:

Եթե պատմության կեղծարարները պնդում են, թե իրր ցեղասպանության մասին խոսում են միայն Թուրքիայի հակառակորդներն ու հայերը, նշանակում է, որ նրանք կամ տեղյակ չեն պատմական իրողությանը, կամ գիտակցաբար արհամարհում են բազում սկզբնաղբյուրներ ու ականատեսների վկայություններ, այն հսկայական գիտական գրականությունը, որոնք լուսաբանում են դառն իրականությունը:

Պատմաբանի «Անհերքելի փաստաթղթեր» հոդվածը[17] մի ապտակ է թուրք այն կեղծարարներին, ովքեր, ժխտելով 1915-1916 թթ. ցեղասպանության փաստը, գրում են, թե այդ մասին խոսում են միայն հայասեր աչառու մարդասերները (Մ. Ներսիսյանն այսպես է անվանել պացիֆիստներին - Է. Մ.) ու Թուրքիայի թշնամիները: Մ. Ներսիսյանը բերում է օսմանյան պետության դաշնակից ու բարեկամ Գերմանիայի, Ավստրիայի եւ Բուլղարիայի պետական արխիվներում պահվող այնպիսի փաստաթղթեր, որոնք անհերքելիորեն հաստատում են Հայոց ցեղասպանության փաստը:

---

[15] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 35, տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 559, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 104, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 68:

[16] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 255, թ. 38-39, տես նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 390-391, **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 105-106:

[17] Տես **М. Нерсисян**, Неопровержимые документы, նույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 164-182, տես նաեւ «Коммунист», 1990, 24 апреля, թ. 92:

Պատմագիտական գրականության մեջ գոյություն ունի այն սխալ պատկերացումը, թե իբր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացիներն են ղեկավարել Թուրքիայի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը, որ երիտթուրքերը միայն կատարել են գերմանացի զինվորականների ու դիվանագետների կամքը: Մ. Ներսիսյանը մերժում է այդ տեսակետը՝ շեշտելով այն իրողությունը, որ Մեծ եղեռնի գլխավոր հանցագործները երիտթուրքներն էին, որ նրանք ոչ թե գերմանացիների կամակատարն էին, այլ ունեին իրենց կանխամտածված բարբարոսական ծրագրերը: Դա նրանց սեփական ծրագիրն էր: Նա մատնանշում է գերմանական պարբերականներից մեկում 1919 թ. հրապարակված մի հաղորդագրություն, ըստ որի, Էնվեր փաշան հրապարակավ խոստովանել է, որ «հայերի գենոցիդը թուրքական կառավարության կողմից իրագործվել է նախօրոք մշակված ծրագրով»[18]:

Հայերի կոտորածներին գերմանական բանակի շատ սպաների մասնակցությունից չի կարելի հետեւություն անել, թե երիտթուրքերը նրանց կամակատարներն էին: Մ. Ներսիսյանը կասկածից վեր է համարում, որ **Մեծ եղեռնի գլխավոր, հիմնական մեղքն ընկնում է Էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաների եւ մյուս ոազմաշունչ գործիչների վրա, գործիչներ, որոնք Հայկական հարցում հետեւողականորեն եւ ամենայն համառությամբ հետապնդում էին իրենց խիստ էքսպանսիոնիստական, ջարդարարական ու ավանտյուրիստական ծրագրերը**[19] (ընդգծումը Մ. Ներսիսյանինն է - Է. Մ.):

Մ. Ներսիսյանը հանդիմանում է այն հայ հեղինակներին, ովքեր փորձում են աղավաղել մեր ժողովրդի պատմության կարեւոր էջերը: Նա քննադատում է Հ. Սահակ վրդ. Տեր-Մովսեսյանի գիրքը[20], որտեղ զարգացվում է այն տեսակետը, թե Մեծ եղեռնի մեղքն ընկնում է Կ. Պոլսի հայ պատրիարքի եւ արեւմտյան ռուսասեր մտավորականության վրա, եւ որ արեւմտահայությունը պետք է ընդուներ երիտթուրքերի առաջարկները, հրաժարվեր ռուսական կողմնորոշումից՝ դրանով իսկ կանխելով ցեղասպանությունը: Մ. Ներսիսյանի զայրույթը տեղին է եւ իրավացի, երբ գրում է. «Անտեսելով

[18] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 62, 162, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 97:

[19] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 144, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 128, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 11:

[20] Տես **Հ. Սահակ վրդ. Տեր-Մովսէսեան**, Նիւթեր հայ ժամանակակից քաղաքական պատմութեան (1912-1915). Պատմաքաղաքական վերլուծումներ, Վենետիկ - Ս. Ղազար, 1993:

պատմական փաստերը՝ մեր հարգելի վարդապետները, ոգեւորված իրենց «վերլուծումներով», փորձում են համոզել ընթերցողին, թե ցարական կառավարությունը եղել է արեւմտահայության թշնամին, որ նա է ինչպես 1890-ական թթ. կոտորածների, այնպես էլ Մեծ եղեռնի գլխավոր մեղավորը»[21]:

Փաստերի տրամաբանությամբ հեղինակը քննության է առնում մի շարք աշխատություններում տեղ գտած անճշտություններ: Որոշ հեղինակներ գտնում են, որ ցեղասպանության հարցում արեւմտյան երկրները ցուցաբերել են անտարբերություն եւ ոչինչ չեն ձեռնարկել դադարեցնելու ոճրագործությունը: Սակայն ելնելով փաստերի համադրումից՝ ուսումնասիրողը գտնում է, որ տարբեր երկրներ տարբեր մոտեցումներ են ունեցել՝ ելնելով իրենց երկրի քաղաքականությունից:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա Մ. Ներսիսյանը հայտնում է այն աներեր հավատամքը, որ Ռուսաստանը, չնայած իր բռնապետությանը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, հավատարիմ հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների դարավոր ավանդույթներին՝ 1915-1917 թթ., ինչպես նաեւ նախորդ ավելի քան 200 տարիների ընթացքում աշխատել է ապահովել, պահպանել հայության ֆիզիկական գոյությունը, հանդես է եկել թուրք ազգայնականների հայաջինջ քաղաքականության դեմ, փորձել խաթարել պանթուրքական ծրագրերը: Ըստ այդմ Մ. Ներսիսյանը հանգում է հետեւյալ եզրակացության. «Հայկական հարցում համընկել են Ռուսաստանի եւ հայ ժողովրդի շահերը»[22]:

Մ. Ներսիսյանը մերժում է այն մտայնությունը, թե իբր 1915 թ. ամռանը ռուսական զորքերի նահանջն արեւմտահայությանը կոտորելու, Արեւմտյան Հայաստանը հայաթափելու նպատակ ուներ: Նա գտնում է, որ ռուսատյացների այս փաստարկները չեն համապատասխանում իրականությանը եւ չի կարելի ռուս առանձին զինվորական գործիչների տրամադրությունները նույնացնել Ռուսաստանի պետական քաղաքականության հետ: Այս միտքը հաստատվում է նաեւ ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանի աշխատության մեջ[23]:

Պատմական ճշմարտությունը մոռացած ռուսատյաց, թուրքամետ եւ արեւմտամետ հեղինակներին Մ. Ներսիսյանը հիշեցնում է, որ 1915 թ. մա-

---

[21] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 254, թ. 162, նաեւ գ. 278, թ. 152, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 136. տես նաեւ նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 21:

[22] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 151, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 135, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 19:

[23] Տես **А. Арутюнян**, Кавказский фронт 1914-1917 гг., Ереван, 1971, էջ 196, 198-199:

յիսի սկզբին ռուսական զորքերը փրկեցին պաշարված վանեցիներին, որ միայն 1916 թ. ռուսական կառավարությունն արեւմտահայ գաղթականությանը տրամադրեց 250 միլիոն ռուբլի ոսկով, նրանց պատսպարեց Հյուսիսային Կովկասում, սեւծովյան քաղաքներում եւ Ռուսաստանի այլ վայրերում, իսկ Կովկասյան ճակատում կռվող ռուս զինվորներն ու կոզակները փրկեցին հազարավոր հայ որբ երեխաների[24]:

Հայոց ցեղասպանության կանխամտածված ծրագրի, երիտթուրքերի կառավարության ու սալոնիկյան հրահանգների իրագործման փաստը հաստատում են 1919 թ. Պոլսում եւ 1921 թ. Բեռլինում տեղի ունեցած դատավարությունների հրապարակած նյութերը[25], որոնց կարեւոր նշանակություն է տալիս Մ. Ներսիսյանը:

Մ. Ներսիսյանը, շարունակելով մանրազնին ուսումնասիրությունը, փաստում է անհերքելին՝ գրելով. «Օսմանյան կայսրության մեջ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իսկապես տեղի են ունեցել արեւմտահայերի զանգվածային կոտորածներ, իսկական ցեղասպանություն՝ հրեշավոր իր դաժանությամբ ու բարբարոսությամբ»[26]:

Մինչդեռ, ըստ պատմաբանի, թուրքական հետադիմական շրջանները, ելնելով քաղաքական նկատառումներից, ծուռ հայելու մեջ են ներկայացնում պատմական անցյալը: Այսպես, 1981 թ. Ստամբուլի համալսարանի խորհրդի ընդունած բանաձեւն արդարացնում է արեւմտահայության տեղահանությունը, անհիմն է համարում Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցած՝ հայերի զանգվածային կոտորածների եւ ցեղասպանության մասին խոսելը[27]: Նույնը կրկնվում է Անկարայի Արտաքին քաղաքականության ինստիտուտի կողմից 1982 թ. հրատարակած «Հայկական հարցը, ինը հարց, ինը պատասխան» գրքում, որը, ինչպես Մ. Ներսիսյանն է նկատում, ըստ երեւույթին, մի խումբ հեղինակների համատեղ աշխատանքի արդյունք է[28]:

Մ. Ներսիսյանը նկատում է, որ 1984 թ. հոկտեմբերին Էրզրումի Աթաթուրքի անվան համալսարանում կայացած չորսօրյա «գիտական սիմպո-

[24] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 152, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 135, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 20:

[25] Տես «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», առաջաբանը, թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝ Ա. Փափազյանի, Երեւան, 1988: «Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը», սղագրություն, Երեւան, 1990:

[26] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 1, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 85:

[27] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 253, թ. 1, նաեւ գ. 256, թ. 139, 152, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 86:

[28] Տես անդ:

զիումում»՝ նվիրված հայ-թուրքական հարաբերությունների պատմությանը եւ, մասնավորապես, Հայկական հարցին ու հայկական կոտորածների խնդրին, փորձ է արվել հիմնավորել կանխամտածված այն թեզը, թե իբր Թուրքիայում երբեք չեն եղել հայության կոտորածներ, ընդհակառակը, հաճախ հայերն են հարստահարել եւ կոտորել թուրքերին[29]:

Խոսելով Հայոց ցեղասպանության փաստը հաստատող աղբյուրների մասին՝ Մ. Ներսիսյանն ամենից առաջ նկատի է ունեցել գերմանական ու թուրքական սկզբնաղբյուրները եւ նախապատվությունը տվել հենց դրանց[30]:

Մ. Ներսիսյանը թուրքական աղբյուրների միջոցով հաստատում է Հայոց ցեղասպանության փաստը: 1915 թ. Հալեպի նահանգապետին ուղղված մի ծածկագիր-հեռագրում գրված էր. «Որոշված է Թուրքիայում ապրող հայերին ոչնչացնել ամբողջովին… պետք է վերջ տալ հայերի գոյությանը: Ուշադրություն մի՛ դարձրեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ էլ խղճի խայթին»[31]:

Դեռ ավելին, Մ. Ներսիսյանը վկայակոչում է Թալեաթի մի այլ հեռագիր, որն ավարտվում է այսպես. «…վերջ տալ բոլորին եւ ամեն կերպ ջանալ ոչնչացնել «Հայաստան» անվանումն իսկ Թուրքիայում»[32]: Նույն Թալեաթը տարիներ անց իր հիշողություններում պետք է գրեր, որ հայերի տեղահանությունը «անգութ մարդկանց պատճառով ողբերգական դարձավ: Ես նպատակ չունեմ ծածկելու այդ գործողությունների դաժանությունը»[33]: Դիպուկ է պատմաբանի հարցադրումը՝ ի՞նչ է սա, կեղծավորությո՞ւն, խոստովանությո՞ւն, Հայոց ցեղասպանության մեղքը ուրիշների վրա գցելու եւ անձնական պատասխանատվությունից խուսափելու փո՞րձ: «Արյունարբու դահիճը, ինչպես տեսնում ենք, դիմելով ակնհայտ կեղծավորության, ջանում էր իր մեղավորությունը բարդել ուրիշների վրա, մինչդեռ հանրահայտ է, որ «անգութ մարդկանց» ղեկավարը հենց ինքն էր», - իրավացիորեն նկատում է Մ. Ներսիսյանը[34]: Իհարկե, ինչպես փաստում է նա, Թալեաթն էր լիակատար ազատություն ընձեռում ահասարսուռ ջարդերի եւ տեղահանության

[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 25, նաեւ գ. 253, թ. 2, նաեւ գ. 254, թ. 44-45, 92-93, 114-115, նաեւ գ. 255, թ. 25, 30, նաեւ գ. 256, թ. 53-54, 139, 152, նաեւ գ. 274, թ. 1, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 86-87:

[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 15-25, նաեւ գ. 255, թ. 29-31, նաեւ գ. 256, թ. 138-150, 151-168, նաեւ գ. 274, թ. 1-4:

[31] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, 254, թ. 65, 122, նաեւ գ. 255, թ. 27, նաեւ գ. 256, թ. 63, 163-164, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 99:

[32] Անդ:

[33] ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 167, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 102:

[34] Անդ:

գործը կազմակերպելու համար՝ ասելով. «Մենք պետք է Թուրքիան տեսնենք այդ անիծված ժողովրդից (հայերից) ազատված»[35]:

Մ. Ներսիսյանը հատուկ ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ Հայոց ցեղասպանության փաստն ընդունել է նույնիսկ թուրք թիվ մեկ ազգայնական, այսպես կոչված, «թուրքերի հայր» Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը[36]: Նա 1926 թ. հունիսի 22-ին Անկարայում շվեյցարացի լրագրող Էմիլ Հիլդերբանդի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ ասել է. «Երիտթուրքերը պետք է պատասխան տային մեր հպատակ մի քանի միլիոն քրիստոնյաների համար, որոնք դաժանորեն աքսորվեցին իրենց հայրենի օջախներից եւ ոչնչացվեցին»[37]: Այս տողերը տպագրվեցին «Լոս-Անջելես Իքզամիներ» թերթի 1926 թ. օգոստոսի 1-ի համարում[38]:

Պատմաբանի բնորոշմամբ՝ նա ոչ հայասեր էր եւ ոչ թուրքերի թշնամի: Հայտնի է, թե 1920-1922 թթ. Մ. Քեմալը եւ քեմալականներն ինչպիսի դաժան քաղաքականություն վարեցին հայերի ու հույների նկատմամբ: Նրանք բարբարոսություններ կատարեցին 1920-1921 թթ. Արեւելյան Հայաստանում եւ 1922 թ. Իզմիրում (Զմյուռնիայում)[39]: 1920 թ. աշնանը թուրքական բանակը, ազգայնական Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ ներխուժելով Արեւելյան Հայաստան, նպատակ ուներ իրագործել արեւելահայության ցեղասպանությունը: «Անկարայից ստացված հրահանգների համաձայն, - գրում է Մ. Ներսիսյանը, - ռազմաշունչ փաշան պետք է խիստ գաղտնի պահեր ջարդարարական այդ ծրագիրը եւ հանդես գար խաղաղասերի դիմակով»[40]:

---

[35] «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 564:

[36] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 204-206, նաեւ գ. 274, թ. 16, նաեւ գ. 651, թ. 1-3, 5-7, 8-9. տես նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 121-123:

[37] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 248, թ. 42, նաեւ գ. 253, թ. 13, 31, նաեւ գ. 254, թ. 71, 103, 125, 134, նաեւ գ. 255, թ. 28, 31, 38, գ. 256, թ. 67, 150, 168, 204, նաեւ գ. 274, թ. 16, նաեւ գ. 651, թ. 1, 5, 8, նաեւ գ. 962, թ. 32: Տես նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 121:

[38] Տես «Los Angeles Examiner», Los Angeles, 1 august, 1926:

[39] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 36, թ. 8-11, նաեւ գ. 274, թ. 5, 14, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին (Զմյուռնիայի հայ եւ հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», Երեւան, 1992, թ. 2-3, էջ 87-92, նույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 116-124, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 109-120, նույնի՝ Քեմալական զորքերի բարբարոսությունները Արեւելյան Հայաստանում 1920 թ. վերջին եւ 1921 թ. սկզբներին, «Պատմաբանասիրական հանդես», 1998, թ. 1-2, էջ 247-256, նույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 305-318, նույնի՝ Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 124-166:

[40] Տես ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 274, թ. 14, տես նաեւ **Մ. Ներսիսյան**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 124:

Իհարկե, նրանք չկարողացան հասնել իրենց նպատակին, շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի պաշտպանության, ինչպես հատուկ ընդգծում է Մ. Ներսիսյանը: Բայց, դժբախտաբար, նրանք ոչ քիչ չարագործություններ կատարեցին:

Ամփոփելով 1915-1916 թթ. Հայոց ցեղասպանության պատմության լուսաբանումը՝ Մ. Ներսիսյանը եզրակացնում է. «Եւ որքան էլ ջանան պատմության կեղծարարները խեղաթյուրել պատմական ճշմարտությունը, նրանց չի հաջողվի թաքցնել այն եւ թյուրիմացության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը»[41]:

Մ. Ներսիսյանը հանգում է այն հետեւության, որ Հայոց ցեղասպանության փաստը կեղծում են ոչ թե տարբեր երկրների ու ազգությունների անվանի հեղինակներն ու հասարակական գործիչները, այլ «մի քանի տասնյակ թուրք նորելուկ «պատմաբանները», որոնց համար ոչ մի նշանակություն չունի ո՛չ գիտական օբյեկտիվությունը, եւ ո՛չ էլ պատմական ճշմարտությունը»[42]:

Այսպիսով՝ գիտական պատշաճ մակարդակով ու մեծ պատասխանատվությամբ, արխիվային փաստաթղթերի եւ տարաբնույթ աղբյուրների ուսումնասիրման հիման վրա հայրենասեր պատմաբանը հերքում է պատմության կեղծարարների եւ հատկապես թուրք պատմաբանների այն տեսությունները, թե իբր հայերի ցեղասպանությունը հորինվել է հենց իրենց՝ հայերի կողմից, եւ որ հայկական «ապստամբություններն» են եղել Հայոց ցեղասպանության գլխավոր պատճառը: Մ. Ներսիսյանը, ընդգծելով որոշ աղբյուրների թուրքամետ բնույթը, նշում է, որ այդպիսիք նույնպես ընդունում են արեւմտահայության ցեղասպանության փաստը: Բերված բոլոր վկայությունների, դժոխքից հրաշքով փրկված ականատեսների, տարբեր երկրների հասարակական-քաղաքական, դիվանագիտական, ռազմական, կրոնական, մշակութային գործիչների հաղորդած տեղեկությունների, պաշտոնական փաստաթղթերի համադրմամբ ու լուսաբանմամբ նա ապացուցում է, որ արեւմտահայության նկատմամբ կատարված ցեղասպանությունն ամենածանր հանցագործությունն է՝ կազմակերպված սուլթան Աբդուլ Համիդի եւ երիտթուրքերի կողմից: Դա նախապես ծրագրված, պետական մակարդակի եւ դաժանորեն իրագործված քաղաքականություն էր:

---

[41] Տե՛ս **Մ. Ներսիսյան**, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, էջ 107:
[42] Անդ:

РЕЗЮМЕ

Академик Мкртич Нерсисян имеет огромный вклад в освещении геноцида армян 1915-1916 годов. Основываясь на архивных материалах и различных источниках, он опровергает те теории фальсификаторов истории, согласно которым армяне сами выдумали геноцид и что ее главной причиной были “восстания” армян.

Разоблачая протурецкую сущность некоторых источников, М. Нерсисян подчеркивает, что они тоже принимают факт геноцида. Сопоставляя и освещая официальные документы и многочисленные свидетельства очевидцев и социально-политических, дипломатических, военных, духовных и культурных деятелей из различных стран, он доказывает, что геноцид армян является наитягчайшим преступлением. Это была заранее спланированная и жестоко осуществленная официальная политика.

SUMMARY

The academician Mkrtich Nersisyan has an exclusive contribution in the treatment of the Armenian Genocide in 1915-1916. Studying the issue on a proper scientific level he based his research on archive materials and various sources and denied the false theories according to which the Armenians made up the genocide, and the main reasons of the genocide were the Armenian so-called revolts.

Illustrating pro-Turkish essence of some sources M. Nersisyan points out that such sources also accept the fact of the Armenian Genocide. Comparing and illuminating official documents, numerous evidences and testimonies of social-political, diplomatical, military, clerical and cultural figures from different countries, he proves that the genocide of Western Armenians was a most grave crime. It was a previously planned officially adopted and cruelly fulfilled politics.